ԿՊ. 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060) 460145
20 մայիս 2017 թ. N 488

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
Կ. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Սույնով հայտնում ենք Ձեզ, որ Հրազդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Մի շարք չափաբաժիններով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր: Հրազդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի կողմից պարբերաբար բողոք է ստացվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվող սննդամթերքների մատակարարման ժամկետների և թերի մատակարարման վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՈԱԿ-Ի տնօրենի զեկուցագրի հիման վրա Հրազդանի համայնքապետարանի կողմից N 1, 7, 23, 30, 38 չափաբաժինների մասով կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին, սակայն ոչ մի գործողություն չի ձեռնարկվել նրա կողմից:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիշյալ մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով խնդրում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատ. Վ. Գյուրջյան
Հեռ (060)460162